Պարույր Սևակ

Արգելանոց

Երկու նռնակ՝ կրծքիդ վրա...
Երանի՜ թե նրանց պայթյունն ինձ սպաներ
Անտառի մեջ՝
Փայտանների ներկայությամբ,
Կամ սենյակում՝
Վարագույրի վկայությամբ...
Ու երկու աչք՝ հոնքերիդ տակ.
Պատերազմի երկու հրձի՜գ...
Ե՛կ, գրավի՜ր, միացրու քե՛զ.
Ես մի ամբողջ տիրություն եմ անտիրական,
Որ վաղուց է զգում կարիք
Քեզ պես վայրագ ու բարբարոս տիրակալի...
Ու երկու ոտք՝ նազանքիդ տակ.
Մկրատ մի նուրբ, որ կոպտորեն
Կտրատում է թելն ըղձանքիս,
Ինչպես լույսի էլեկտրական լարն են հատում,
Եվ խավարը անհուսության
Ինձ է ներսից շրջապատում...
Եվ զույգ ականջ՝
Ցորենագույն գանգուր մսե
Սևամազե գանգուրիդ տակ անթափանցիկ...

Եվ զո՜ւր մի կանչ.
Դու չե՛ս լսում,
Որովհետև... մտքիս մեջ եմ հետդ խոսում,
Որովհետև մինչև անգամ... ծանո՜թ չեմ քեզ...
Ու թերևս դու կի՛ն էլ չես,
Այլ գուցե մի... արգելանո՜ց,
Ուր հասնում են նռնե՜ր վայրի,
Ուր փայայաններն են զբաղվում հրձիգությա՛մբ,
Ուր հրազեն չի արձակում ո՜չ մի որսորդ...
Արգելանո՜ց... արգելանո՜ց:
Ես հասկացա՛,
Բայց... ոտքե՜րըս չեն հասկանում
Եվ, ինքնաշարժ կարկինի պես,
Բնա՜վ կամքդ չհարցնելով՝
Հետևում են դեռևս քեզ
Եվ չափում ա՛յն,
Ինչ կոչվում է «անմատչելի»
Ու ձգվում է
Իմ հիացքից մինչև անծիր հմայքը քո,-
Մի անսահմա՜ն տարածություն,
Որ թերևըս հաղթահարվեր,
Թե աստղային օրացույցով մենք ապրեինք
Կամ թերևըս չլինեինք այսքա՜ն... այսքա՜ն... օրինապահ:

26.XI.1963թ.
Երևան